ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 519-Ա/2 «18» ապրիլի, 2023 թ.

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2023» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Կազմակերպել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակում անցկացվող «Արցախի հետ համագործակցության ծրագիր-2023» մրցույթը:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2023 թ. ապրիլի 18-ի
N 519-Ա/2 հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակում կազմակերպում է «Արցախի հետ համագործակցության ծրագիր - 2023» ՄՐՑՈՒՅԹԸ:

Մրցույթին մասնակցության հայտը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե՝ մինչև 2023 թվականի մայիսի 26-ը ներառյալ:

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.scs.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությունից՝ աշխատանքային օրերին, ժամը 10:00 - 17:00 (հեռախոս՝ 21-01-40*116; *108):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե

Հավելված 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2023 թ. ապրիլի 18-ի
N 519-Ա/2 հրամանի

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2023» ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մրցույթը

1.1. «Արցախի հետ համագործակցության ծրագիր - 2023» մրցույթը (այսուհետ՝ **Մրցույթ**) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ **Կոմիտե**) և Արցախի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջև 2009 թվականի նոյեմբերի 15-ին կնքված «Գիտատեխնիկական ոլորտում համագործակցության մասին» պայմանագրի:

1.2. **Մրցույթը** կազմակերպվում է՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով:

1.3. **Մրցույթն** ուղղված է Հայաստանի Հանրապետության և Արցախի գիտական խմբերի միջև համագործակցության ընդլայնմանը:

1.4. **Մրցույթն** իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներով (Հավելված N 2.1):

1.5. **Մրցույթի** հրավերի փաթեթը սահմանում է դրան դիմելու կարգը, չափանիշները, Հայտերի գնահատման փուլերը և նախագծերի ֆինանսավորումն ու հաշվետվողականությունը:

2. Նպատակը

2.1. **Մրցույթի** նպատակներն են.

- խորացնել Հայաստանի Հանրապետության և Արցախի գիտական խմբերի միջև համագործակցությունը,
- աջակցել Արցախում գիտական ներուժի զարգացմանը,
- խթանել Արցախի համար գիտության առաջնահերթ ոլորտների առաջընթացը,
- նպաստել Արցախում գիտության ոլորտում երիտասարդ կադրերի պատրաստման գործընթացին:

3. Խումբը

3.1. Գիտական նախագիծը (այսուհետ՝ **Նախագիծ**) մշակում և իրականացնում է 3-4 անձից բաղկացած գիտահետազոտական խումբը (այսուհետ՝ **Խումբ**), որի **անդամներն** են՝ Խմբի ղեկավարը (այսուհետ՝ **Ղեկավար**), գիտական խորհրդատուն (այսուհետ՝ **Խորհրդատու**) և մինչև երկու **կատարողներ**:

3.2. **Խմբի** անունից հանդես է գալիս միայն **Խմբի ղեկավարը:**

3.3. **Խմբի անդամները** չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացվող մեկից ավելի հայտերում:

4. Խմբի ղեկավարը

4.1. **Խմբի ղեկավարը** պետք է հանդիսանա Արցախի մշտական բնակիչ և **Նախագծի** իրականացման ընթացքում բնակվի Արցախում:

4.2. **Ղեկավար** կարող է լինել այն անձը, որը՝

- ծնվել է 1953 թվականի հունվարի 1-ից հետո,
- ունի գիտական աստիճան, պետք է ներկայացնի առնվազն մեկ գիտական հրապարակում վերջին 5 տարիների համար միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Arts&Humanities Citation Index (AHCI)», «Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», կամ գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում տպագրված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)») ընդգրկված պարբերականներում, (այսուհետ՝ **ՄԳՇ**),
- չունի գիտական աստիճան, պետք է ներկայացնի առնվազն երկու գիտական հրապարակում **ՄԳՇ** -ում վերջին 5 տարիների համար:

5. Խորհրդատու

5.1. **Խորհրդատուն** պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչ և **Նախագծի** իրականացման ընթացքում բնակվի Հայաստանի Հանրապետությունում:

5.2. **Խորհրդատու** կարող է հանդիսանալ գիտական աստիճան ունեցող անձը, որը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող կազմակերպություն և վերջին 5 տարիների ընթացքում գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառում ունի.

- առնվազն երկու գիտական հոդված՝ ազդեցության գործակից ունեցող (ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների) ամսագրերում,
- առնվազն չորս գիտական հրապարակում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)»), կամ գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչությունների հրապարակած գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, կամ «Scimago Journal & Country Ranking» պորտալի առնվազն Q4 քառորդ, իսկ գիտաժողովի նյութերի դեպքում՝ առնվազն Q2 քառորդին համարժեք SJR ինդեքս (SCImago Journal Rank Indicator) ունեցող պարբերականներում:

6. Խմբի կատարողները

6.1. **Խմբի կատարողը** պետք է հանդիսանա Արցախի մշտական բնակիչ և **Նախագծի** իրականացման ընթացքում բնակվի Արցախում:

6.2. **Խմբի կատարող** կարող է լինել առնվազն բակալավրիատի երրորդ կուրսի ուսանողը:

6.3. **Խումբը** պետք է ունենա առնվազն մեկ երիտասարդ **կատարող**՝ ծնված 1983 թվականի հունվարի 1-ից հետո:

6.4. Նշված տարիքային շեմը կարող է ավելանալ՝

- զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ երկու տարով,
- երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար մեկ տարով:

7. Ժամկետները

7.1. **Նախագծի** իրականացման տևողությունը **24 ամիս** է:

7.2. **Մրցույթին** դիմելու վերջնաժամկետն է **2023 թվականի մայիսի 26-**ը:

7.3. Պայմանագրերը կնքվում են **Մրցույթի** արդյունքները հայտնի դառնալուց հետո՝ **10-օրյա ժամկետում**:

7.4. **Նախագիծն** սկսվում և իրականացվում է Պայմանագրում նշված ժամկետներում:

8. Ակնկալվող արդյունքները

8.1. **Նախագծի** ավարտից հետո **Խմբի** անդամները տվյալ ծրագրի շրջանակում պետք է ունենան առնվազն երկու գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում (չեն ընդունվում այն հրապարակումները, որտեղ միակ հեղինակը Խորհրդատուն է):

8.2. «8.1» կետում նշված պայմանի չկատարելը/կատարելը կանդրադառնա հետագայում **Կոմիտեի** հայտարարած մրցութային ծրագրերին **Խմբի** անդամների կողմից ներկայացված գիտական նախագծի փորձագիտական գնահատականի վրա՝ դրանից հանելով/գումարելով տվյալ մրցույթի առավելագույն գնահատականի հինգ տոկոսի չափով միավոր **Խմբի Ղեկավարի** և **Խորհրդատուի** դեպքում և մեկ տոկոսի չափով միավոր՝ **Խմբի կատարողի** դեպքում: Հանրագումարում կհանվի/կգումարվի տվյալ մրցույթի առավելագույն գնահատականի ոչ ավելի քան հինգ տոկոսի չափով միավոր: Հետագա մրցութային ծրագրերին **Խմբի անդամների** կողմից ներկայացված գիտական նախագծի փորձագիտական գնահատականի նվազեցումը կչեղարկվի **Նախագծի** ավարտից հետո «8.1» կետի պայմանը բավարարելուն պես:

8.3. **Նախագծի** իրականացման ընթացքում **Խմբի անդամները** պետք է ապահովեն **Նախագծի** և/կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և տարածում (հարցազրույցներ, գիտահանրամատչելի ամսագրերում հրապարակումներ, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն Մասնագիտական փորձագիտական Խորհրդի **(այսուհետ՝ Խորհուրդ)** կողմից ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:

8.4. **Նախագծի** շրջանակում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել **Կոմիտեի** կողմից ստացած աջակցության մասին.

The work was supported by the Science Committee of RA, within the framework of the research project № ____.

8.5. Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվելու **Նախագծի** արդյունք, հետևաբար՝ չի ընդունվելու հաշվետվության մեջ:

II. ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Հայտ ներկայացնելը

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել հայերեն՝ grants@scs.am էլեկտրոնային հասցեին ուղարկելով՝

- **Ղեկավարի** դիմումը (Հավելված N 2.2),
- Մրցույթին մասնակցության **Հայտը** (Հավելված N 2.3),
- **Նախագծի** իրականացման վայր հանդիսացող գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ **Կազմակերպություն**) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը,
- մինչև 35 տարեկան **կատարող(ներ)ի**
  - ✓ անձնագրի և սոցիալական քարտի/հանրային ծառայությունների համարանիշի կամ նույնականացման քարտի պատճենը,
  - ✓ ասպիրանտ կամ ուսանող հանդիսանալու մասին տեղեկանքը, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին,
  - ✓ ՀՀ և Արցախի զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ զինվորական գրքույկի պատճենը,
  - ✓ երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ համապատասխան փաստաթղթի պատճենը:

10. Նախահաշիվը

10.1. **Նախահաշիվը** կազմված է «Աշխատանքի վարձատրություն» և «Այլ ծախսեր» հոդվածներից: «Այլ ծախսեր» հոդվածը բաղկացած է «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ», և «Վերադիր ծախսեր» ենթահոդվածներից:

10.2. Ծախսերի 12-ամսյա առավելագույն գումարը պետք է նախատեսել.

- 4 անձից բաղկացած խմբի համար՝ 6 400 000 *(վեց միլիոն չորս հարյուր հազար)* ՀՀ դրամ,
- 3 անձից բաղկացած խմբի համար՝ 4 800 000 *(չորս միլիոն ութ հարյուր հազար)* ՀՀ դրամ:

10.3. **Նախահաշվի** «Աշխատանքի վարձատրություն» հոդվածը կազմելիս աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափը պետք է ընդունել 100 000 (*հարյուր հազար*) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները):

10.4. Աշխատանքի վարձատրության համար նախատեսվող 12-ամսյա առավելագույն գումարը նախատեսել.

- 4 անձից բաղկացած խմբի համար՝ 4 800 000 (*չորս միլիոն ութ հարյուր հազար*) ՀՀ դրամ,
- 3 անձից բաղկացած խմբի համար՝ 3 600 000 (*երեք միլիոն վեց հարյուր հազար*) ՀՀ դրամ:

10.5. Աշխատանքի վարձատրության գումարը վերոնշյալ չափից պակաս նախատեսելու դեպքում տարբերությունը կարող է օգտագործվել **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում:

10.6. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ» և «Վերադիր ծախսեր» ենթահոդվածներով գումարային 12-ամսվա կտրվածքով կարող է նախատեսել մինչև 400 000 հազար դրամ՝ **Խմբի յուրաքանչյուր** անդամի հաշվարկով:

10.7. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման կամ ծառայությունների ծախսեր: Բոլոր ծախսերն անհրաժեշտ է հիմնավորել **Նախահաշվի** մեկնաբանության մեջ:

10.8. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել **Նախագծի** ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով միջազգային գիտաժողովներին մասնակցության համար: Խմբի անդամների գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերն անհրաժեշտ է հիմնավորել **Նախահաշվի** մեկնաբանության մեջ:

10.9. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսվում է **Կազմակերպության** ղեկավարի իրավասությանը թողնվող գումարը, որով տնօրենը (ռեկտորը) ապահովում է Կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում **Նախագծի** կատարման համար անհրաժեշտ պայմաններ: **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով (24 ամսվա համար) կարող է հայցվել մինչև 220 000 հազար ՀՀ դրամ:

III. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

11. Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին.

11.1. **Կոմիտեն** ուսումնասիրում է **Մրցույթին** ներկայացված **Հայտերի** համապատասխանությունը **Մրցույթի** պայմաններին:

11.2. Ստուգման արդյունքները տրամադրում է հայտերի գնահատման համար ստեղծված **Խորհրդին:**

11.3. **Խորհրդի** կողմից քննարկվում է **Հայտը** փորձաքննության ենթարկելու հարցը:

11.4. Բեալի ցանկերում (Beall’s list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն ներկայացնելու դեպքում **Հայտը** փորձաքննության ենթարկելու հարցը կքննարկվի **Խորհրդի** կողմից:

11.5. **Խորհուրդը** հաստատում է փորձաքննության ենթակա Հայտերի ցանկը:

12. Փորձաքննությունը

12.1. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են՝ **Նախագծի** արդի վիճակը, նորույթը, իրականացման նախադրյալները, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, համագործակցության նպատակահարմարությունը, գիտական արդյունքների տնօրինումը և տարածումը, **Նախահաշվի** հիմնավորվածությունը, ազդեցությունը ոլորտի զարգացման վրա, **Ղեկավարի, Խորհրդատուի** և **կատարողների** մասնագիտական

համապատասխանությունը **Նախագծին** ու որակավորումը, ինչպես նաև գիտության տվյալ մասնագիտության առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

12.2. Փորձաքննությունն իրականացնելիս **Խորհուրդը** յուրաքանչյուր հայտի համար լրացնում է **Կոմիտեի** կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը (Հավելված N 3):

13. Գնահատման արդյունքները

13.1. **Խորհուրդը Կոմիտեի** նախագահին է ներկայացնում **Հայտերի** գնահատականների վարկանիշային ցանկը:

13.2. **Կոմիտեն**, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր մասնագիտության շեմային գնահատականը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին է ներկայացնում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը և նախատեսված ֆինանսավորման չափը հաստատելու մասին հրամանի նախագիծը:

13.3. **Մրցույթի** արդյունքում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը տեղադրվում է **Կոմիտեի** պաշտոնական կայքում:

13.4. **Կոմիտեն Կազմակերպության** ղեկավարին տրամադրում է տվյալ **Կազմակերպության** հաղթող **Հայտերի** ցանկը և յուրաքանչյուր **Հայտի Նախահաշիվը:**

13.5. **Կոմիտեն Խմբի ղեկավարին** տրամադրում է փորձաքննության արդյունքները և անցողիկ շեմային գնահատականը:

13.6. **Կոմիտեի և փորձագետների** կողմից **Հայտի** բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14. Հայտի տեխնիկական քննությունը

Հայտը չի դիտարկվում, եթե՝

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմանները,
- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ գիտական նախագծի հետ,
- միաժամանակ ներկայացված է **Կոմիտեի** կողմից անցկացվող այլ մրցույթներին:

15. Այլ պայմաններ

15.1. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող **Հայտ** և այնուհետև հաշվետվություն ներկայացնելու դեպքում **Ղեկավարը** պետք է առաջնորդվի «Հեղինակային

իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

15.2. **Նախագծի** իրականացման ընթացքում, յուրաքանչյուր 12 ամիսը լրանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, **Կոմիտե** է ներկայացվում ընթացիկ հաշվետվություն, որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է **Նախագծի** ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն:

15.3. **Նախագծի** կատարման ընթացքում **Կոմիտեն** կարող է իրականացնել **Նախագծի** մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել **Խորհրդին**:

15.4. **Նախագծի** ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացությունը տալիս **Խորհուրդը** հաշվի է առնում նաև մշտադիտարկման արդյունքները:

15.5. **Նախագծի** հետագա ֆինանսավորումը դադարեցվում է ընթացիկ հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում:

15.6. **Նախագծի** իրականացման 24-րդ ամիսը լրանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, **Կոմիտե** է ներկայացվում ամփոփիչ հաշվետվություն, որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն:

15.7. **Կոմիտեն** կարող է ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** ամփոփագիրը և հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

15.8. **Կազմակերպության**, **Կոմիտեի** և **Ղեկավարի** միջև կնքվում է եռակողմ պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

15.9. Ֆինանսավորման երաշխավորված **Նախագծի Խմբի** անդամների հետ (բացի **Խմբի** ղեկավարից) դրամաշնորհի շրջանակում կնքված պայմանագրերի պատճենները ներկայացվում են Կոմիտե:

15.10. **Նախագծի** իրականացման համար ձեռքբերված սարքերը, նյութերը և ծառայությունները ներառվում են **Կազմակերպության** հաշվեկշռում՝ հետագայում կանոնադրական նպատակներով օգտագործելու համար:

15.11. **Խմբի ղեկավարը** կարող է դիմել **Կոմիտե**՝ կատարողի համարժեք փոփոխություն կատարելու՝ ըստ տարիքային խմբի և գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի, կամ **Խմբի** կատարողների թիվը մեկով կրճատելու միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում: **Խմբում** կատարողի փոփոխություն կատարելու դեպքում **Ղեկավարը Կոմիտե** է ներկայացնում նոր **կատարողի** հետ դրամաշնորհի շրջանակում կնքված պայմանագրի պատճենը, իսկ **Խմբի** կատարողի թվի կրճատման դեպքում կնքվում է **Պայմանագրի** գնի փոփոխության մասին համաձայնագիր:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
1.1 Մաթեմատիկա	4.1 Անասնաբուծություն, անասնաբուժություն
1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	4.2 Բուսաբուծություն
1.3 Ֆիզիկա և աստղագիտություն	4.3 Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
1.4 Քիմիա	4.4 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա
1.5 Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ	***5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
1.6 Կենսաբանական գիտություններ	5.1 Հոգեբանություն
2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	5.2 Տնտեսագիտություն և գործարարություն
2.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն	5.3 Մանկավարժական գիտություններ
2.2 էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	5.4 Սոցիոլոգիա
2.3. Մեխանիկա	5.5 Իրավունք
2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն	5.6 Քաղաքական գիտություններ
2.5 Քիմիական տեխնոլոգիաներ	5.7 Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն
2.6 Նյութագիտություն	5.8 Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն
2.7 Բժշկական սարքաշինություն	***6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
2.8 Էկոլոգիա	6.1 Պատմություն, հնագիտություն
2.9 Կենսատեխնոլոգիա	6.2 Լեզվագիտություն, գրականագիտություն
2.10 Նանոտեխնոլոգիա	6.3 Փիլիսոփայություն, էթիկա
3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6.4 Աստվածաբանություն, կրոնագիտություն
3.1. Ընդհանուր բժշկություն	6.5 Արվեստագիտություն
3.2. Կլինիկական բժշկություն	
3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա	

Հավելված N 2.2
«Արցախի հետ համագործակցության ծրագիր-2023 » մրցույթի հրավերի

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ

_____ից
(անուն, ազգանուն, հայրանուն)

_____
(հասցե)

_____
(հեռախոս)

Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ ընդունել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակում «Արցախի հետ համագործակցության ծրագիր – 2023» մրցույթին մասնակցության «_____» վերնագրով հայտը:

Դիմող՝ _____ (_____)
(*ստորագրություն*) (*անուն ազգանուն*)

«____» _____ 2023թ.

ՀԱՅՏ

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2023» ՄՐՑՈՒՅԹԻ

Հայտը հանձնված է «_____» _____ 2023թ. Ծածկագիր՝ 23T/AA-_____
(*լրացվում է ՀՀ գիտության կոմիտեում*)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի

- վերնագիրը

- մասնագիտական դասիչը ըստ Հավելված 2.1-ի

- բնույթը

հիմնարար		տեսական	
կիրառական		փորձարարական	

2. Հուշող (բանալի) բառեր (մինչև 5 բառ)

3. Խմբի ղեկավարի ԱԱՀ (լրիվ)

4. Խմբի գիտական խորհրդատուի ԱԱՀ (լրիվ)

5. Նախագծի իրականացման վայր հանդիսացող կազմակերպության

- լրիվ, կրճատ անվանումները
- կազմակերպաիրավական ձևը
- հասցեն
- հեռախոսը
- էլեկտրոնային հասցեն

6. Գիտահետազոտական խմբի անդամների թիվը

7. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը _____ հազար դրամ

8. Վերադիր ծախսերի գումարը _____ հազար դրամ

9. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ

10. Խմբի ղեկավարի ստորագրությունը

11. Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը

Կ.Տ.

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. ***Անոտացիա***

2. ***Խնդրի արդի վիճակի վերլուծությունը***

3. ***Նախագծի գիտական նպատակները և խնդիրները***

4. ***Հետազոտական ծրագիրը***

5. ***Իրականացման գիտական մեթոդները***

6. ***Օրացուցային պլանը (ըստ եռամսյակների)***

7. ***Խորհրդատուի հետ համագործակցության նախադրյալները, ինչպես նաև նպատակահարմարությունը և ակնկալվող արդյունքները***

8. ***Տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները***

9. ***Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները*** (հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))

10. ***Օգտագործված գրականության ցանկը***

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

Ազգանուն, անուն, հայրանուն	
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը	
Կրթությունը (*բուհ, մասնագիտություն, մասնագիտացում*)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը, վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (*աշխատանքային, բջջային*)	
Էլեկտրոնային հասցե	
Հրատարակված	գիտական հոդվածներ (*քանակը*)
	մենագրություններ (*քանակը*)
2018-2023 թվականներին հրատարակված գիտական հոդվածները (*հեղինակներ, վերնագիր, ամսագիր, տարի, հատոր, էջեր*) (10-ից ոչ ավելի)	1)
	2)
	3)
	4)
	5)
	(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)
Ստացված օտարերկրյա դրամաշնորհները	1)
	2)
	(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

_____

(խմբի ղեկավարի ստորագրությունը)

Ձև 2

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՍԻՆ

Ազգանուն, անուն, հայրանուն	
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը	
Կրթությունը (*բուհ, մասնագիտություն, մասնագիտացում*)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը, վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (*աշխատանքային, բջջային*)	
Էլեկտրոնային հասցե	
Հրատարակված	գիտական հոդվածներ (*քանակը*)
	մենագրություններ (*քանակը*)
2018-2023 թվականներին հրատարակված գիտական հոդվածները (*հեղինակներ, վերնագիր, ամսագիր, տարի, հատոր, էջեր*) (10-ից ոչ ավելի)	1)
	2)
	3)
	4)
	5)
	(*անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր*)
Ստացված օտարերկրյա դրամաշնորհները	1)
	2)
	(*անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր*)

_____

(գիտական խորհրդատուի ստորագրությունը)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ*

Ազգանուն, անուն, հայրանուն	
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը	
Կրթությունը (*բուհ, մասնագիտություն, մասնագիտացում*)	
Որակավորումը (*դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս*)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը, վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (*աշխատանքային, բջջային*)	
Էլեկտրոնային հասցե	
2018-2023 թվականներին հրատարակված գիտական հոդվածները (*հեղինակներ, վերնագիր, ամսագիր, տարի, հատոր, էջեր*) (10-ից ոչ ավելի)	1)
	2)
	3)
	4)
	5)

_____

(կատարողի ստորագրությունը)

* *Լրացվում է յուրաքանչյուր կատարողի համար առանձին*

Ձև 4

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ծածկագիր՝ 23T/AA-_____

(լրացվում է << գիտության կոմիտեում)

հազար դրամ

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (*ներառյալ եկամտային հարկը*)									
ազգանուն, անուն, հայրանուն	2023 թ.			2024թ.			2025թ.		
	ամսական գումար	ամիսների քանակ	պահանջվող գումար	ամսական գումար	ամիսների քանակ	պահանջվող գումար	ամսական գումար	ամիսների քանակ	պահանջվող գումար
1)		*7*			*12*			*5*	
2)		*7*			*12*			*5*	
3)		*7*			*12*			*5*	
4)		*7*			*12*			*5*	
Ընդհանուր գումար									

2. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում			
2"1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (*բոլոր ծախսերը հիմնավորվել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ*)	2023 թ.	2024 թ.	2025 թ.
1)			
2)			
...			
Ընդհանուր գումար			
2.2 ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (*հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ*)	2023 թ.	2024 թ.	2025 թ.
1)			
2)			
...			
Ընդհանուր գումար			
2"3. ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ	2023 թ.	2024 թ.	2025 թ.
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	2023 թ.	2024 թ.	2025 թ.

Խմբի ղեկավար՝ _____ _____

(*ստորագրություն*) (*անուն, ազգանուն*)

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____

(*ստորագրություն*) (*անուն, ազգանուն*)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____

(*ստորագրություն*) (*անուն, ազգանուն*)

Կ.Տ.

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

* *Բացատրել և հիմնավորել ծախսերի նախահաշվի բոլոր կետերը*

Հավելված N 3
«Արցախի հետ համագործակցության ծրագիր-2023» մրցույթի հրավերի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

5	***Գերազանց:*** *Պատասխանը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:*
4	***Շատ լավ:*** *Հարցի պատասխանն առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:*
3	***Լավ:*** *Պատասխանն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:*
2	***Միջին:*** *Հարցի պատասխանը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:*
1	***Վատ:*** *Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:*
0	***Շատ վատ:*** *Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:*

Հարցաշար

1.	**Արդի վիճակի վերլուծություն:** Որքանո՞վ է համապարփակ վերլուծված ոլորտի արդի վիճակը:	
2.	**Արդիականություն**: Որքանո՞վ է գիտական ծրագիրը համապատասխանում ոլորտի արդի վիճակին:	
3.	**Ծրագիր:** Որքանո՞վ են հստակ ձևակերպված գիտական ծրագիրը, առաջադրված խնդիրներն ու նպատակները:	
4.	**Նորույթ**: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող գիտական նախագիծը:	
5.	**Մեթոդներ:** Որքանո՞վ են առաջարկվող մեթոդները համապատասխանում գիտական նախագծին:	
6.	**Համապատասխանություն:** Որքանո՞վ է գիտական նախագիծը համապատասխանում տվյալ մասնագիտությանը:	
7.	**Նախագծի պլանավորում:** Որքանո՞վ են համապատասխանում գիտական նախագծի իրականացման փուլերը հետազոտության նպատակներին հասնելուն և որքանո՞վ են դրանք իրատեսական:	
8.	**Մարդկային ներուժ:** Որքանո՞վ է համապատասխանում խմբի անդամների թվաքանակն ու մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
9.	**Համագործակցության նպատակահարմարություն:** Որքանո՞վ է խորհրդատուի ներգրավումը նպաստում գիտական նախագծի իրականացմանը:	
10.	**Միջգիտակարգային բնույթը:** Արդյո՞ք նախագծի իրականացման ընթացքում նախատեսվում են միջգիտակարգային հետազոտություններ:	
11.	**Ազդեցություն:** Ի՞նչ ազդեցություն կունենա նախագծի հաջող կատարումը Արցախում տվյալ ուղղության զարգացման վրա:	
12.	**Արդյունքների տնօրինում:** Որքանո՞վ է հստակ ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը, և որքանո՞վ են ակնկալվող արդյունքները համապատասխանում ֆինանսավորման ծավալներին (արդյունքների հրապարակում (ամսագրեր, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
13.	**Նախահաշիվ:** Որքանո՞վ է համապատասխանում պահանջվող ֆինանսավորման ծավալը և դրա բաշխումն ըստ հոդվածների՝ հետազոտության նպատակներին հասնելուն:	
14.	**Հետազոտության ղեկավարում:** Որքանո՞վ է համապատասխանում ղեկավարի մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
15	**Խորհրդատուի մասնագիտական որակավորում:** Որքանո՞վ է համապատասխանում Խորհրդատուի մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
16.	**Խմբի կատարողների մասնագիտական որակավորում:** Որքանո՞վ է համապատասխանում խմբի կատարողների (այդ թվում մինչև 35 տարեկան երիտասարդ մասնագետների) մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
Մեկնաբանություն:		
	Ընդհանուր գնահատական	